գործակատարները գաղտնի կերպով գրգռում էին մեզ հայերի դէմ... Բայց մենք այնքան միամիտ եղանք, որ չհասկացանք, որ դրանով մեր կործանումն են նախապատրաստում...

— Հիմա նոյնը չե՞ն անում, հիմա ձեզ չե՞ն գրգռում հայերի դէմ...

— Գրգռում են, եւ աւելի վատ կերպով... բայց մեր յիմար ազնականները չեն հասկանում: Չեն հասկանում եւ մեր հոգեւորականները: Օրինակի համար, կարելի է լսած լինէք, որ մեզանից ոչ այնքան հեռու, Արտոսի ստորոտներում, կենում է մեծ շէյխը: Նա աստծոյ սուրբ մարդն է, ես շատ մեղք արած կը լինեմ, եթէ այդ մասին ամենափոքր կասկած ունենամ, բայց կրքոտ մարդ է: Գիտէ՞ք, որքա՜ն անգամ նրան գրգռել են հայերի դէմ... Որքա՜ն անգամ նա ոչնչացրել է հայոց ամբողջ գաւառներ... Եւ բոլոր քրդերը լսում են նրա ձայնը եւ խոնարհւում են նրա հրամանին: Բաւական է նրան՝ մի առաւօտ վերկենալ ու ասել, թէ մարգարէն երազում հրամայեց բոլոր գաւուրներին կոտորել: Իսկոյն քրդերը կառնեն իրանց զէնքերը եւ կը հետեւեն նրան: Եթէ «գուշակողը» չլինէր, նա շատ վատ բաներ կաներ...

— Ո՞վ է այդ «գուշակողը», — հարցրեց Ասլանը, որպէս թէ չէ ճանաչում:

— Ասում են՝ Արաբիայի կողմերիցն է, մարգարէի հայրենիքից: Բոլորովին սուրբ մարդ է. ամէն բան գիտէ. ինչ-որ հարցնէք, նա կասէ ձեզ: Մինչեւ անգամ շէյխը, որ մեծ իմաստութիւն ունի, շատ բաներ նրանից է հարցնում:

— Ուրեմն, դուք գոհ չէ՞ք օսմանցիներից:

— Ի՞նչ ունենք գոհ լինելու: Նրանք եկան, մեր տան մէջ երկպառակութիւն ձգեցին. մեզ թշնամացրին ոչ միայն մեր դրացի հայերի հետ, այլ թշնամացրին քուրդը քրդի հետ: Այժմ չէք գտնի մի ցեղ, որ մի այլ ցեղի հետ հաշտ լինի: Եղբայրը եղբօր միսն է ուտում: Բայց այդպէս չէր առաջ. սէր կար, միաբանութիւն կար, ամէն մարդ իր չափը ճանաչում էր, փոքրը գիտէր մեծի պատիւը, իսկ մեծը գիտէր փոքրին հոգ տանել: Այժմ ամէն բան փոխուել է: Այն մարդը, որ երէկ իմ ախոռատան մէջ ծառայ էր, իմ ձիաների աղբն էր մաքրում, այսօր իրան մուդիր, գայմագամ, փաշայ է կոչում, եւ ես պէտք է գնամ նրան գլուխ վեր բերեմ: Աւելի լաւ չէ՞ր լինի, որ ես այդ գլուխը գերեզման տանէի, քան թէ անպատուէի. ..

Բայց մի բան չպէտք է ուրանալ, որ օսմանցին գալուց յետոյ երկիրը բաւական խաղաղացաւ:

— Ինչպէ՞ խաղաղացաւ. աւելի վատթարացաւ: Առաջ մենք մեր երկրի տէրն էինք եւ գիտէինք մեր տան բանը, ճանաչում էինք՝ ո՛վ է լաւը, ո՛վ է վատը, եւ եթէ մէկը մի չար գործ էր կատարում, իսկոյն իմանում էինք, եւ յանցա-